

891.99

U-27

4 FEB 2011

№ 11 «ՆՈՐ ՀՈՍԱՆՔԻ» ԳՐԱԴԱՐԱՆ № 11

891.99

U-27

այլ.

ՄԻՔ. ՄԵՆԻԼԵՆ

016701

50

ՃԵԿԵՏԵԳԻՐ

280



ԹԻՖԼԻՑ

Տպարան Ա. Մ. Կերեսկիձէի, Կարմառակի 1.

1913

891.99

U-27

24 JUN 2013

42030

ՃԱԿԱՏԱԳԻՐ

Ոչ ոք չէր քնել տանը, ամենքն էլ ոտքի վրայ էին:

Հիւանդի սենեակից երկու սենեակ հեռու, գլուխը ձեռքերի մէջ լուռ նստած էր Ռուբէն Բարսամեանը: Նա շուտ-շուտ ոտքի էր կանգնում, մի քայլ առաջ գալիս, լսողութիւնը լարած՝ ուշադիր հետևում ճշերին, որոնք փակւած դռների ետևից թէև աւելի մեղմ՝ բայց էլի լսելի էին: Նա մի քանի անգամ անցաւ սենեակի երկարութեամբ ու էլի նստեց տեղը, փակեց ձեռներով ականջները, որ չլսէ այդ ձայները:

Դուրսը դեռ մութ էր, երբ միանգամից դադարեցին այդ սիրտ մաշող ձայները՝ և յանկարծ ամեն ինչ լռեց:

Նա վեր ցատկեց տեղից, մի րոպէ լուռ կանգնած էր սենեակի մէջ տեղում՝ քարացած արձանի նման, կարծես վախենալով, որ մի շարժում—և նորից կը սկսեն այն ձայները:

Յանկարծ, կասես խոր քնից սթափւելով, նա արագ մօտեցաւ դռանը ու բացեց. ձայները ընդհատւել էին: Նա առաջ անցաւ դէպի հետևեալ դուռը, այնտեղ էլ մի րոպէ կանգ առաւ՝ ստուգելու հա-



մար—արդեօք իր լսողութիւնը չի՞ դաւաճանում իրան։

Այդ ըոպէին հիւանդի սենեակի դուռը բացւեց և բժիշկին ու մանկաբարձուհին կիսաձայն խօսելով անցան, չնկատելով նրան շէմքին կանգնած, որ չուած, հարցական հայեացքով ուղեկցեց նրանց՝ մինչև դուռս եկան սենեակից։

Լուռ կանգնած էր դռներում և չէր կարողանում ոչ առաջ և ոչ էլ յետ շարժւել։

Հիւանդի սենեակից ոչ մի ձայն չէր լսւում. բոլոր էր։ Նա ուզեց վազել, բանալ դուռը և տեսնել՝ թէ ինչ է կատարւել այն սենեակում, որտեղից քառուղի ժամ առաջ լսւում էին այն խելագարեցնող ճրջերը... Իսկ այժմ այնպէս լուռ է... Գուցէ մեռած է... Ինչո՞ւ ոչ մի ձայն, ոչ մի հառաչանք չի լսւում — եթէ մեռած չէ...

Այդ ըոպէին՝ բժշկին ճանապարհ դնելուց վերադարձաւ մանկաբարձուհին և արագ քայլերով դիմեց դէպի հիւանդի սենեակը, չնկատելով շէմքում գունատ, ուրուականի պէս կանգնած տղային։

Նա արդէն ներս էր մտնում, երբ տղան սիրտ անելով ձայն տւեց։ Նա յետ նայեց և նկատելով տղային, կամաց էլի փակեց դուռը՝ որը կիսաբաց էր և մի քանի քայլ առաջ եկաւ։

— Դուք քնած չէ՞ք։

— Ոչ։

— Իսկ ո՞ւր է ամուսինը։

— Զգիւեմ... Ի՞նչպէս է...

— Ազատեց, լաւ է...

— Այո՞, — խոր շունչ քաշելով շնչաց նա...

— Այո, վտանգը անցած է, գնացէք հանգստացէ՛ք։

— Մայրիկը ներսն է։

— Ներսն է։

Տղան կանգնած էր. շրթունքները շարժւում էին, նա ուզում էր էլի մի բան հարցնել, բայց կարծես գերբնական ոյժ պիտի դորձադէր, որ կարողանար արտասանել այդ մի խօսքը... Նա մի քանի անգամ պատրաստւեց հարցնել, բայց շունչը կարծես կարւում էր...

— Իսկ երեխան... յանկարծ անբնական բարձր կանչեց նա ու աչքերը յառած ուղիղ նրա աչքերին, դողալով սպասում էր՝ թէ ինչ կը լսի... բայց նա ոչինչ չլսեց։

Մանկաբարձուհին ձեռքով մի շարժում արաւ ու արագ մտաւ հիւանդի սենեակը։

— Գարձեա՛ւ... անէծք շնչաց տղան ու անցաւ իր սենեակը, առանց հանելու ընկաւ մահճակալի վրայ ու թաղեց գլուխը բարձերի մէջ։

Դա 6-րդ երեխան էր՝ որ ծնւեց մեռած։

Այս մէկի հետ էլ վարւեցին բոլորովին այնպէս, ինչպէս երեխաները վարւում են սատկած կատուի ձագի հետ։ Մի փոս փորեցին բագում՝ պատի տակ և այդ փոքրիկ դիակը բոլորովին մերկ՝ դրին հողի մէջ։

Երբ միւս օրը Գարեգին Բարսամեանը տուն վերադարձաւ, նա ոչոքի ոչ մի խօսք չասաց, չը մտաւ անգամ հիւանդ կնոջ ննջարանը, լուռ անցաւ իր առանձնասենեակը և նստեց գրասեղանի առաջ ու լուռ, աչքերը մի կէտի յառած նստած էր... Երեւի Էրկար կը մնար այդ դրութեան մէջ, եթէ մայրը

ներս չմտնէր ու չը սթափեցնէր նրան այդ արթունքնից:

Նա երկու ամիս է, որ գործի չի գնում:

Հիւանդութիւնը քանի գնում, վատանում է: Մի օր նա պատառոտել էր բոլոր գործի թղթերը ու լցրել վառարանը ու դուրս էր եկել զրասենեակից:

Գիշերները համարեա չէր քնում: Ժամերով կանգնում էր պատշգամբում ու անթարթ նայում լուսնին, աստղերին և յանկարծ ճշում, վախեցած օգնութիւն կանչում... Այնպէս էր ճշում, որ կարծես մահացու վէրք էին հասցրել: Նա բոլորովին անտարբեր էր դէպի շրջապատը: Երեկոյեան դեռ նոր էր սկսել կնոջ երկունքը, երբ նա անից դուրս եկաւ ու վերադարձաւ միմիայն միւս օրը և անցաւ առանձնասենեակը:

Երբ մայրը ներս մտաւ, նա այդ չնկատեց, մինչև չմօտեցաւ ու կամայ ձեռքը չդրեց նրա ուսին:

— Գարեգին, որդի, ախար ո՞ւր ես, այդպէս չի լինիլ, կինդ մեռնելուց ազատեց... Ինչո՞ւ մի չես անցնում նրա մօտ, ախար մեղք է: Խեղճը քանի անգամ հարցրել է, գնա մի քիչ սիրտ տուր... Նա լինչով է մեղաւոր, ո՞վ գիտէ որ մեղքիս համար է Աստուած ինձ պատժում... Ամեն ինչ նրա ձեռքին է... Մեղայ, մեղայ քեզ...

Մայրը կարծում էր, որ երեխաների չապրելն է, որ նրան այդպէս շմեցրել է և աշխատում էր մխիթարել:

Բոլոր ժամանակ, քանի մայրը խօսում էր, նա անշարժ էր, բոլորովին տարւած էր մտքերով և կարծես չէր լսում... Յանկարծ, խոր քնից սթափւածի

պէս՝ նա ցնցւեց ամբողջ մարմնով, կարծես մէկը ասեղներով ծակծակեց, վեր ցատկեց տեղից, մի վայրկեան սառած մնաց ու ապա արագ անցաւ սեղանատուն, բացեց պահարանը, հանեց կօնեակի շիշն ու մի բաժակի հետ նորից վերադարձաւ: Քայլելով՝ նա բացեց շիշը ու լցրեց բաժակը ծայր է ծայր, այնպէս որ մինչև բերան տանելը մի մասը թափւեց հագուստի վրայ. նա լցրեց երկրորդը, դատարկեց ու այնպէս ուժով ցած դրեց բաժակը՝ որ փշուր-փշուր եղաւ:

Մայրը վախեցած մօտ վազեց:

— Չը վիրաւորւեց...

Յանկարծ նա յետ դառաւ և կարծես՝ նոր էր նկատում մօրը՝ գոռաց.

— Ի՞նչ ես ուզում...

— Չվիրաւորւեց ձեռքդ...

— Գնա:

— Վնաս է... Բաւական է ինչքան խմեցիր:

— Գնա, — կրկնեց նա:

Այնպիսի եղանակով էր աււած այդ «գնա»-ն, որ չը գնալը նշանակում էր նրան աւելի գրգռել, ու խեղճ կինը հառաչելով դուրս եկաւ սենեակից: Նա մի բաժակ էլ դատարկեց ու սկսեց արագ՝ թակարդ բնկած գայլի պէս պտտել սենեակում:

Բժիշկները նրան խտրիւ արգելել էին ոգելից խմիչքների դործածութիւնը, բայց վերջին ժամանակները՝ նա կարծես դիտմամբ, բժիշկների խօսքը չը կատարելու համար, սկսել էր ամեն օր խմել:

Դուռը բացւեց, ներս մտաւ Ռուբէնը: Դռան յե-

տւր կանգնած էր մայրը և չէր համարձակուում ներս գալ:

Նա մի րոպէ լուռ կանգնած աչքերով հետևում էր եղբորը, առանց ուշք դարձնելու նրա վրայ, կասես սենեակում ոչոք չկար, շարունակում էր պտոյտներ գործել:

Նա աչքի տակից նայեց եղբորը, արագ մօտեցաւ սեղանին, լցրեց բաժակը ու կարծես զայրացնելու համար, հոհուալի ծիծաղեց ու դատարկեց, նայեց եղբորը՝ մի ցինիկ ժպիտ դէմքին, կարծես ուզում եր ասել.

— Գիտեմ որ կատաղած ես, իսկ ես թքել անգամ չեմ ուզում քեզ ու քո դատողութեանդ վրայ:

Ռուբէնը առանց ոչինչ ասելու մօտեցաւ, ձեռքը մեկնեց, որ կօնեակի շիշը վերցնի: Բայց նա այնպիսի կատաղութեամբ խփեց նրա ձեռքին, որ Ռուբէնը ստիպւած էր յետ քաշել:

— Ի՞նչ ես ուզում:

— Քեզ չի կարելի... Բժիշկն արգելել է, հազիւ գտելով իրեն շնչաց նա, նստեց, մեկնելով ձեռքը և այս անգամ վերցնելով շիշը.

— Յած դիր,—ասաց նա:

Ռուբէնը շիշն ամուր սեղմել էր ձեռքի մէջ ու գունատ, լուռ նայում էր եղբորը:

— Յած դիր, ասում եմ:

Նա յարձակեց, որ խլի ձեռքից:

— Ես կը ջախջախեմ քո...

Նա չվերջացրեց, դողում էր ամբողջ մարմնով:

— Է՛յ... ճչաց նա ահարկու ձայնով,—Է՛յ... ո՛վ

կայ... Մայրիկ, հեռացրէք սրան այստեղից... հեռացրէք, թէ չէ ես կը խեղդեմ այս շան լակոտին:

Գունատ, վախեցած ներս մտաւ մայրը:

Միւս սենեակից լսեց հիւանդի յուսահատ ճիչը:

— Կորէք այստեղից...

— Ռուբէն հեռացիր... խնայիր պառաւ մօրդ, խնայեցէք այն խեղճ հիւանդին:

— Անասուն, անասուն...

Մի քանի անգամ կրկնեց նա կիսաձայն և էլ ոչինչ չկարողացաւ ասել. մի բան բարձրանում էր դէպի կոկորդը, խեղդում էր. աչքերը սևանում էին: Ոռնոցի նման մի բան դուրս թռաւ նրա կրծքից, խփեց շիշը յատակին ու արագ փախաւ այդ սենեակից:

Մայրը ապշած կանգնած էր ու չգիտէր ինչ անել. գնալ նրա յետեից, թէ այստեղ մնայ... Ուղեղը կարծես դադարել էր գործելուց:

Գարեգինն ընկաւ աթոռի վրայ և սկսեց բարձրաձայն լալ:

Մայրը մօտեցաւ, գրկեց որդու ալեխառն գլուխը և ոչինչ չկարողացաւ ասել. արցունքները խեղդում էին նրան:

— Մայրիկ, նա ինձ վիրաւորեց,—մանկան նման նա գանգատուեց մօրը,—չէ որ ես մեծ եղբայր եմ, մի փոքրիկ յարգանք, ամօթ... Նա ինձ...

— Հանգստացիր, հանգստացիր, չէ որ քեզ վնաս է այդպէս վրդովելը, յիմար է, ջահել է, ինքն էլ չի հասկանում իր ասածը. ներիր, ներողամիտ եղիր...

— Ի՞նչպէս է Աննան,—բոլորովին մոռանալով իր արտասուքն ու բարկութիւնը՝ հարցրեց նա:

— Այսօր մի քիչ լաւ է:

— Գնանք նրա մօտ:

— Հա՛... շատ լաւ: Նա այնքան կուրախանայ... Գանի անգամ հարցրել է:

— Երեխան մեռած է, աւելի լաւ... գիտես մայրիկ, մենք բոլորս էլ հիւանդ ենք, ես էլ, Ռուբէնն էլ — մենք պէտք է բժշկուենք... Մայրիկ, մայրիկ, — ուրախացած կանչեց նա, մի նոր գիւտ արածի պէս, — գիտես ինչ, գնամ Աննայի համար մի ընծայ առնեմ, նա շատ կուրախանայ... Մի ոսկէ ժամացոյց, կամ ազամանդեայ մատանի, — և առանց պատասխան սպասելու դուրս վազեց, այնքան արագ, որ մայրը չկարողացաւ ոչ պահել, և ոչ էլ մի խօսք ասել: Վազեց Ռուբէնի սենեակը:

Նա պտուկել էր՝ աչքերը փակ. մօր մտնելուց նա բացեց աչքերը և մնաց լուռ:

Մայրը մօտեցաւ նրան:

— Ռուբէն, նա էլի գնաց:

Ռուբէնը լուռ էր:

— Նա ասաց, որ գնում է Աննայի համար նւէր առնի, էլի կերթայ, ով գիտէ ինչ ծախսեր կանի:

— Բաւական է, մայրիկ, — նետրդային կերպով կանչեց տղան՝ արագ վեր ցատկելով տեղից, — բաւական է, ես էլ կը խելագարւեմ... Ես վաղը գնում եմ:

— Ինչո՞ւ էք ինձ ողջ-ողջ գերեզման դնում, — իսթերիք կերպով ճչաց մայրը, յանկարծ դունատեց և գետին կը գլորւէր, եթէ Ռուբէնը ժամանակին չհասնէր և չբռնէր նրան: Նա մօրը նստեցրեց աթոռի վրայ, որը հագիւ էր շնչում: Զուր լցրեց բաժակը և մօտեցաւ նրան:

— Խմիր, խմիր մայրիկ... Հանգստացիր... Ի՞նչ

է եղել, կը գնայ էլ, կը գնայ էլ, — և առաջին անգամ չէ:

— Ռուբէն, ի՞նչ է պատահել, ո՞ր է մայրիկը, — լսեց Աննայի ձայնը:

Մայրը մի քիչ հանգստացած վեր կացաւ և լուռ գիմեց դէպի դուռ:

— Մայրիկ, — նորից լսեց Աննայի ձայնը:

— Գալիս եմ, — թոյլ ձայնով կանչեց պառանու գնաց:

— Գնա մայրիկ, ես էլ կերթամ նրա յետեից:

Ծաշի ժամանակ էր, որ Ռուբէն Բարսամեանը տուն էր դառնում, երբ հեռից լսեց ինչ որ խուլ աղաղակներ: Նա արագացրեց քայլերը և երբ մտաւ իրանց բակը մի բոպէ չհասկացաւ, թէ ինչ է կատարւում: Երկրորդ յարկի պատշգամբից իրար յետեից ցած էին թափւում աթոռներ, սեղաններ, բաժակներ ու ափսէներ: Պատշգամբի վրայ կանգնած էր մայրը, նա կուռւմ էր մէկի հետ, ուղում էր խանգարել, բայց պատշգամբից ցած էին թափւում:

Նա արագ աստիճաններով վեր բարձրացաւ...

Հաւաքւել էին հարեանները, բայց ոչ ոք չէր յանդգնում մօտենալ, մայրն էր աշխատում արգելել:

Նա մի բոպէ չգիտէր ինչ պիտի անել: Աչքերը արիւն էին կոխել, նա միմիայն այն տեսաւ, որ բռնել էր մօր կոկորդը, սխմել էր պատին, մի քանիսը մօտ վազեցին, որ օգնեն: Այդ բոպէին լսեց Ռուբէնի յուսահատ ձիշը. բոլորը մի վայրկեան յետ նայեցին:

— Հեռացէ՛ք զրանից, — նորից ճչաց նա և ատրո՛ճանակի գնդակը վզգալով անցաւ ու բարեբախտաբար մնաց պատի մէջ: Նա կատաղութեամբ վրայ ընկաւ,

մի քանի հարւածներ հասցրեց եղբօր գլխին ատըր-
ճանակի կոթով... Միւսներն էլ սիրտ անելով մօտե-
ցան և մի կերպ ազատեցին թշուառ պառաւին, որը
ուշաթափւած էր:

Մի քանի կանայք Աննային էին հանգստացնում,
որը լսելով այդ ձայները՝ վեր էր կացել անկողնից և
եկել օգնելու:

— Մայրիկ, մայրիկ, — շնչաց նա՝ բռնալով աչ-
քերը: — Մի վախենար, հանգստացիր, մայրիկին ոչինչ
չի եղել:

Պառաւին մի կերպ ուշքի բերին և տարան ան-
կողին, Աննային նոյնպէս:

Բժիշկը եկաւ և գտաւ Ռուբէնին նեարգային
այնպիսի ցնցումների մէջ, որ ինքն էլ վախեցաւ:

Մի ժամից աւելի անցաւ, երբ նա էլ մի քիչ
հանդարտեց, և երբ բոլորը սթափւեցին այդ ծանր
կօշմարից, այժմ նկատեցին՝ որ Գարեգինը չկայ:

Ամբողջ երկու օր փնտռեցին քաղաքում, քաղա-
քից դուրս, սարերում, ձորերում, մինչև որ քարայրի
մէջ գտան թուլացած և ուժասպառ, ճակատի վրայ
չորացած արիւն:

Այլևս անհնար էր տանը պահել: Բժշկի խորհրդ-
ով նրան տարան հիւանդանոց:

—

Մի շաբաթ էր անցել այն օրւանից:

Աննան արդէն ոտի վրայ էր: Տարիքից առաջ
թառամած, ծերացած մի կին էր, թէև քառասուն
տարեկան էլ չկար, բայց մազերը միանգամայն ձեր-
մակած էին: Նրան նայելիս մարդ տկամայ խղճում
էր, որ նա ապրած է, կարծես օրւայ իւրաքանչիւր

վայրկեանը նրա համար մի ծանր բեռ էր, որ վզից
կապած ստիպւած էր քարշ տալ: Ուրուականի պէս
նա քայլում էր սենեակից-սենեակ, լուռ, անձայն:

Ամուսնութիւնից անցել էր 15 տարի: Այդ 15
տարւայ ընթացքում, երիտասարդ, աշխոյժ աղջիկը,
լի սիրով դէպի իր ամուսինը — պառաւել էր, կշտացել
կեանքից, այլևս անժպիտ քարշ էր տալիս կեանքը:
Ամուսնու հիւանդութիւնը նրան վերջնականապէս ըն-
կճեց:

Տունը աւելի մեռելատան նման էր, բոլորը լուռ
էին: Մայրը նստած էր տախտի վրայ, ձեռները գըր-
կած և անշարժ նայում էր տարածութեան մէջ:

Ռուբէնը փակւած էր իր սենեակում, եղբօր
ուրուականը չէր հեռանում նրա աչքի առաջից:

Նա բժշկական ֆակուլտետի վերջին կուրսի ու-
սանող էր և շատ լաւ էր հասկանում, թէ ինչ են
նշանակում այն բոլոր վիժումները, երեխաների մե-
ռած ծնւելը: Նա քրքրում էր իրենց անցեալը, նա
գիտէր, որ շատ եղբայրներից ու քոյրերից՝ հրաշքով
մենակ իրանք էին ազատւել մահաւան ճանկերից, ազա-
տւել են, որ աւելի սոսկալի մահով մեռնեն, որպէս
զի և ուրիշներին դժբախտացնեն: Նա յիշեց նրան,
որին սիրում է, որին արդէն չորս տարի է խօսք է
տւել և նա անհամբեր սպասում է նրան: Արդեօք ի-
րաւունք ունի նա կապել նրա կեանքը իրի հետ, որը
հետզհետէ պիտի նեխւի:

Նա նստեց, գրեց նրան, որ ամեն ինչ վերջա-
ցած է, որ նա իրաւունք չունի ոչ սիրելու, ոչ էլ
ամուսնանալու: Բայց չուղարկեց նամակը, պատռեց
և որոշեց, որ ինքը անձամբ, ամեն բան՝ առանց խնա-

յերու, ոչ նրան, ոչ իրեն—ասել. նա խելօք է, նա կը հասկանայ...

— Իսկ եթէ ինքը սխալուում է, չէ որ դա կարող է լինել եղբոր անձնական մեղքերի հետևանքը, — յանկարծ նա յիշեց հօրը:

Ամբողջ հինգ տարի նա ընկած էր տանը, ինչպէս կենդանի մեռած: Ամբողջ հինգ տարի այդ ննջեցեալը պառկած էր ամենքի աչքի առաջ, բայց նրան չէին թաղում: Նա միշտ լուռ էր, անձայն, առանց ցանկութիւնների... աչքերը միշտ չռած...

Յանկարծ նրան թւաց, թէ ինքն էլ խելագարւած է, ուղեղը փափկում է գանգի մէջ, որ այլևս չի կարողանում մտածել, որ ձայն էլ չի կարող հանել: Հիւանդ հայրը պարզ պատկերացաւ նրա վառ երևակայութեան առաջ, իր անմիտ լայն բացած աչքերով: Նա ուղեց գոռալ, օգնութիւն կանչել... Արագ վեր ցատկեց տեղից և երկու ձեռքով այնպէս ուժեղ սղմեց գլուխը, որ ցաւ զգաց: Արագ անցաւ այն սենեակը, ուր նստած էին մայրը և Աննան:

Նա երկար լուռ նայեց նրանց: Վախեցած բեկբեկուող ձայնով դառաւ նրանց՝ հազիւ արտասանելով խօսքերը.

— Ինչո՞ւ էք լուռ... ինչո՞ւ էք լուռ...

Մի քանի անգամ կրկնեց նա, կարծես մոռացել էր խօսելը, կարծես էլ ուրիշ բան պէտք չէ նրան, բացի մի կենդանի ձայն լսելուց:

Մայրը բարձրացրեց գլուխը, նայեց նրան ոչինչ չասաց:

Աննան աջ ձեռքով յետ տարաւ ճակատին թափ-

ւած մազերը և մի խեղճ, աւելի ցաւ արտայայտող ժպիտ խաղաց նրա գունատ դէմքի վրայ:

Ռուբէնը մօտեցաւ մօրը, բռնեց նրա ձեռքը և սկսեց անթարթ նայել մօր աչքերին:

— Աննա, — յանկարծ ընդհատեց նա այդ լուռութիւնը: — Ես մայրիկի նման եմ չէ... Ես մայրիկի նման եմ... Իսկ նա հօրս նման է, կատարեալ հայրս: Իսկ ես, մայրիկ, քեզ նման եմ:

Մայրը զարմացած ու վախեցած նայեց որդուն, մօտ քաշեց նրան, սեղմեց նրա գլուխը իր կրծքին ու համբուրեց ճակատը: Մի կաթիլ արցունք զողաց նրա ձեռացած, անկրակ աչքերում:

— Ի՞նչու էք այդպէս յուսահատւած տխուր, մեր ձեռքին ինչ կայ... Անիծեալ ճակատագիր... Եկէք խօսենք... Կուգէք անեկեղոսներ պատմեմ... Դու թըշւառ կին ես, Աննա, ես շատ եմ խղճում քեզ...

Աննան, որ մինչ այդ կրծում էր ներքին շրթունքը, — այդ խօսքերի վրայ լուռ, անձայն սկսեց լալ:

— Մենք բոլորս էլ թշւառ ենք, ճակատագրից անիծւած... Խեղճ մայրիկ, դու ի՞նչով ես մեղաւոր... Ինչքան վիշտ ես կրել, խեղճ մայրիկ... Ինչպէս է, մայրիկ, որ չես խելագարւել:

— Հողը իմ գլխին, երեսս պինդ է:

— Մայրիկ, անէծք կայ մեզ վրայ, սոսկալի ա-
նէծք: Անիծւած է հայրս, բայց անէծքը մեզ վրայ է
թափւել:

Աննան արագ բարձրացաւ ու անցաւ իր սենեակը՝ թագցնելու հեկեկանքը, որ այլևս անկարող էր զսպել:

— Ներիր, Աննա...

Նա գլուխը դրեց մօր գոգին և փակեց աչքերը ու լռեց:

Մայրը բարձրացրեց աչքերը դէպի երկինք. նրա գունատ շրթունքները լուռ աղօթք էին մրմնջում:

Նա աշխատեց օր առաջ կարգի բերել ընտանեկան գործերը և փախչել. զգում էր, որ օր-օրի վրայ առողջութիւնը աւելի վատանում էր, նեարդները այլևս չէին հպատակում նրան:

Այն ատենը, որտեղ ապրում էին — սեփականութիւն էր: Ներքեի յարկը վարձով էր տրւած, վերելում իրենք էին և մի ուրիշ բնակիչ: Որոշեցին Ռուբէնի գնալուց յետոյ, նրա սենեակին էլ վարձով տալ, քանի որ իրենք երկու հոգի էին մնում:

Այն հիմնարկութիւնը, որտեղ ծառայած էր Գարեգին Բարսամեանը, որոշել էր ամբողջ տարւայ ուժիկը տալ միանւագ:

Գնացքը երբ շարժւեց, նա իրեն կարծես փրկւած համարեց այն ուրուականներից, որոնք զիշեր ու ցերեկ հանգիստ չէին տալիս, մի ինչոր թեթևութիւն զգաց, սիրտը նւագում էր կրծքի տակ, նա ինքն էլ չգիտէր ինչու — ուզում էր ճշալ ու կանգնել, եթէ յանկարծ ուղքի չգար և չնկատէր, որ շրջապատւած է ճանապարհորդներով, որոնք նրա այդ վարմունքը խելագարութեամբ կը բացատրէին:

Նա վեր կացաւ ու դուրս գնաց կուպէից. նրան խանգարում էին այդ մարդիկ, որոնց հետ նա ոչ մի գործ չուներ:

Ուղեղը նեարգային կերպով փոթորկւում էր գլխում՝ ոչ մի բանի վրայ կանգ չառնելով:

Բարեբաղդաբար նախալագոնում ոչոք չկար: Նա բացեց պատուհանը և այրւող գլուխը տւեց քամուն. առաւօտից անձրեւը մաղում էր, սառ հատիկները զարկւում էին նրա այրւող երեսին՝ մի դուրեկան սառնութեամբ...

Ուղեղը զագարեց այնպէս տենդոտ կերպով գործելուց, բազկերակը աւելի կանոնաւոր սկսեց զարկել, յոգնած դէմքի վրայ ինչոր մի անդորրութիւն իջաւ. մի քանի րոպէ նա ինքնամոռացման մէջ ընկաւ:

— Ասողիկ... Ասողիկ, — բոլորովին անգիտակցաբար կրկնում էր նա այդ անունը, որ մեխի պէտքցել էր գլխումը:

Երրորդ օրն է, որ նա վագոնումն է: Արագ սլանում է միշտ հեռու ու հեռու նրանցից, որոնց նա սիրում, խղճում է, բայց անկարող է մնալ նրանց մօտ... Ճանապարհը նրա վրայ բաւական լաւ ազդեցնոր մարդիկ, հեռու այն սիրտ մաշող մտքերը: Նա ինքը թէև ոչ ոքի հետ համարեայ չէր խօսում, բայց երբեմն ժամերով լուռ նստած էր նրանց մօտ, լսում էր նրանց պատմութիւնները: Այդ երեք օրւայ ընթացքում նա երբէք խօսք չէր արտասանել: Միայն առաջին օրը հարեանը հարցրեց:

— Հեռու էք գնում:

— Մոսկւա, — կարճ պատասխանեց նա և լռեց:

Քանի նա մօտենում էր Մոսկւային, այնքան նա աւելի յաճախ էր յիշում Ասողիկին. կայարաններից մէկում նա ուզեց հեռագրել, ապա զղջաց և չհեռագրեց:

1098
49

Արդէն սկսեւ էին երևալ ամառանոցները, գործարանները, և մի կէս ժամից՝ նա արդէն Մոսկւա կը լինի: Նա ինչ որ մի վախ զգաց, առաջ այնքան սաստիկ, որ պատրաստ էր նորից վերադառնալ ետ, դէպի Կովկաս, որտեղ դեռ բնութիւնը ծաղկում է, իսկ այստեղ մահւան դեղնութիւն է պատել: Անձրևը մանր հատիկներով մաղում էր միօրինակ ձանձրալի խշշոցով...

— Ի՞նչպէս պիտի հանդիպէ նա նրան, ինչ պիտի ասի,— մտքերը շփոթւած էին նրա գլխում...

Լսեց սուրոցը. ճանապարհորդները խառնեցին իրար, սկսեցին պատրաստել իջնելու: Մի քանի բուսից յետոյ գնացքը կանգ առաւ, բոլորը դուրս թափւեցին վազոններից...

Նա իրերը թողեց կայարանում և ինքը էլեքտրաքարշով գնաց սենեակ վարձելու: Նրա համար այդ հեշտ էր, որովհետեւ միմիայն կլինիկաների մօտերքը պիտի վնասէր կամ ամենաշատ Պլիզիխայի վերջերում:

—

Նա մի կով սենեակ գտաւ, ամիսը 20 բուբլիով և իսկոյն կայարանից տեղափոխեց իրերը:

Հինգ օրւայ ճանապարհը նրան այնպէս էր յոգնեցրել, որ իսկոյն բացեց անկողինը և պառկեց: Երկար չարչարւեց, բայց քնել չկարողացաւ: Երկու ուժեղ զգացմունքներ կուում էին նրա մէջ. նա անդիմադրելի ցանկութիւն ունէր, որքան կարելի է շուտ տեսնել նրան, նա արագ վեր կացաւ, հագնւեց և ուզեց գնալ, բայց իսկոյն զղջաց. վճռեց այսօր չը տեսնել նրան, մի քիչ կարգի բերել մտքերը և ապա...

Նեարդային կերպով նա պտաւում էր սենեակում.— պէտք չէ, պէտք չէ գնալ,— մրմնջում էր նա,— թող այսօր էլ անցնի:

Բայց նա անկարող էր դիմադրել ինքն իրեն, արագ հագաւ վերարկուն, վերցրեց գլխարկը և իջաւ:

Երբ դուրս եկաւ փողոց, զգաց մեծ քաղաքի բոլոր առաւելութիւնները: Նրան ոչ ոք չէ ճանաչում. այդ բուսիին ծանօթի, ընկերոջ հանդիպելը նրա համար այնքան անախորժ էր, որ նրանց հանդիպելուց նա պատրաստ էր փախչել, անքաղաքավարի լինել, չպատասխանել նրանց հարցերին:

Փողոցի անկիւնում նստեց էլեքտրաքարշ: Նա մտքումը կրկնում էր, թէ ինչ պէտք է ասէր նրան, ամեն ինչ այնպէս լաւ էր դասաւորւած, այնպիսի համոզեցուցիչ փաստեր կային, որ նա ուզենար-չուզենար պէտք է հպատակէր նրա որոշումներին: Կը լայ, կը ցաւի, կը տանջւի, որ այդ այդպէս է, բայց փոխել անկարելի է:

Նամակից արդէն գիտէր հասցէն, իջաւ էլեքտրաքարշից, մի քիչ տեղ ոտով գնաց, գտաւ № 9 տունը, բարձրացաւ երրորդ յարկը: Նախ քան զանգահարելը նա սկսեց դողալ, սիրտը սկսեց աւելի ամուր բարախել և նա մի վարկեան մոռացաւ այնքան լաւ անգիր արած խօսքերը, որ պիտի ասէր:

— Առանց յիմարութիւնների,— լսելի ձայնով շշնջաց նա և համարձակ սեղմեց էլեքտրական զանգակի կոճակը և վախեցած, անմիջապէս յետ քաշեց ձեռքը և մի վայրկեան մտածեց փախչել:

Ինչո՞ւ գնալ, ինչո՞ւ տեսնել, ինչո՞ւ ասել այն բոլորը, որ պիտի ասէր, միթէ աւելի լաւ չէ, ոչինչ

հատեցի էլեքտրաքարչ և ուղղակի այստեղ եկայ: Ինչ յիմար աղախին ունես, քիչ էր մնում ինձ հերս: չը թողնի: Այնքան սպասեցրեց դռան յետեր, մինչև նայեց անցագիրը և ստուգեց:

Ռուբէնը լուռ էր, մտքերը շփոթւած էին, այդ անսպասելի հանդիպումը նրան միանգամայն շշմեցրեց: Նա արդէն հաւատացած էր, որ այդ օրը անցաւ և կարող կը լինի աւելի պատրաստւած, աւելի հանգիստ խօսել նրա հետ:

— Ինչո՞ւ ես լուռ:

— Չը գիտեմ, այնքան բան կար ասելու, քեզ տեսայ և բոլորը մոռացայ:

— Ինչո՞ւ այսքան ուշացար, ես քեզ վաղուց էի սպասում, մէկ ամիս է, որ ես այստեղ եմ:

— Չէ որ գրել էի:

Նրանք նորից լռեցին. աղջկայ դէմքը տխրեց:

Ռուբէնի առաջ նորից պատկերացաւ եղբայրը, Աննայի մոռյոլ դէմքը, մայրը՝ նստած տախտի վրայ:

Նա վեր կացաւ, մի անգամ անցաւ սենեակի երկարութեամբ և կանգնեց աղջկայ առաջ:

Նա ուզեց խօսել, ասել բոլորը՝ ինչ մտածում էր, մի անգամից վերջացնել ամեն ինչ, իր ձեռքով ջարդ ու փշուր անել իր երջանկութիւնը: Բայց ձայնը խեղդւում էր կոկորդում, կրծում էր շրթունքները, որ լալով չընկնի նրա ոտները և աղաղակի:

— Ինչ ուզում է թող լինի, ես սիրում եմ և անկարող եմ ոտնատակ տալ իմ երջանկութիւնս:

— Աստղիկ, դու դեռ ամեն բան չը գիտես,— հազիւ կարողացաւ արտասանել և հեկեկալով ընկաւ

նրա ոտների մօտ. թաղեց գլուխը նրա գոգում և հեծկտաց...

— Ես ոչինչ էլ չեմ ուզում իմանալ. իմ յիմար, ցնորւած երեխայ... Դէ՛հ հանգստացիր... Ես քեզ սիրում եմ և ուրիշ ոչինչ չեմ ուզում գիտենալ...

Ռուբէնը բարձրացրեց գլուխը, մի վայրկեան նայեց նրա աչքերին և շշմաց.

— Մենք պէտք է մեռցնենք այդ սէրը... Ես իրաւունք չունիմ մտածել երջանկութեան մասին: Իրաւունք չունիմ:

Աղջիկը գունատ ոտքի կանգնեց, ստուերի նման նա էլ բարձրացաւ և մի քանի վայրկեան նրանք լուռ կանգնած էին իրար հանդէպ:

— Էլ ի՞նչ ունես ասելու,— սառը հարցրեց աղջիկը:

— Ես գիտեմ՝ մեռցնել այդ սէրը, նշանակում է հրաժարւել կեանքից:

— Յետո՞յ:

— Աստղիկ, դու չգիտես... դա լուկ պատահականութիւն, չէ: Դա մի սոսկալի անէծք է, որ դրոշմւած է իմ ճակատին... Դու չես տեսել հօրս, այդ մեծ էգոիստին, դու չես տեսել եղբօրս, զրանց ուրուականները ամեն տեղ քայլ առ քայլ սողում են զարշապարիս յետերից և ոչ մի տեղ ես հանգիստ չունեմ նրանցից, նրանք ինձ ոչ մի տեղ հանգիստ չեն թողնում: Դու գիտես, թէ ինչ է պրոգրէսիւ կաթւած: Դա հոգեկան հիւանդութիւն չէ, խելագարութիւն չէ, մահ չէ... Դա, ինչ որ զարհուրելի և սոսկալի մի բան է, աւելի վատ՝ բան 100 խելագար, 100 մահ՝ ի մի առած... Ոչ, ոչ,

դու ինձ չպէտք է սիրես... Ես իրաւունք չունեմ այնպէս թեթեամբիտ վարեւելու: Ինչպէս հայրս... Անտղիկ, հասկացիր, ես քեզ սիրում եմ, բայց ես չեմ ուզում ինքս ինձ արհամարհել, ինքս ինձանից զգեւել... Ներքիւր ինձ, մոռացիր... Դու մի հետեիր ինձ, ես զէպի անգունդ եմ զլուրում:

Նա ընկաւ գահաւորակի վրայ, թողեց զլուխը ձեռներէ մէջ:

Աղջիկը լուռ կանգնած էր նրա մօտ: Նա կարծես քարացել էր, ոչինչ չէր գտնում ասելու:

— Լսի՛ր, Ռուբէն... — Երկար լուռութիւնից յետոյ ասաց նա՝ նստելով նրա մօտ և մի ձեռքով զրկելով նրա զլուխը:

— Չորս տարի է մենք ծանօթ ենք և առաջին իսկ օրից ես զգացի, որ առանց քեզ կեանքը կը կորցնի իմ աչքում իր արժէքը. քանի զնաց այդ զգացմունքը աւելի ամրացաւ և այն ինչ առաջ ինձ միմիայն թւում էր, այժմ փաստ է և դու եկել ես՝ առում, թէ՛ բաժանւենք... Ես անկարող եմ առանց քեզ ապրել, դուր ես ինձ պատմում այդ բոլորը. ինչիս է պէտք թէ ինչ է լինելու յետոյ, ապագայում: Ես այժմ երիտասարդ եմ և ուզում եմ վայելել երջանկութիւն: Թող յետոյ այդ երջանկութիւնը թէկուզ խորտակւի, բայց ես երջանիկ կը լինեմ — որքան կարող եմ... Մենք կը հալածենք այդ ուրուականները: Այնտեղ քեզ հիւանդացրել են, այստեղ ես քեզ կը բժշկեմ իմ սիրով... Ես քեզ մոռացնել կը տամ ամենը, ամենը... Կը տեսնես ինչպէս մի քանի օրից յետոյ դու միանգամայն կը կերպարանափոխւես.

խեղճ մանկիկս, ինչպէս տանջել են քեզ այնտեղ, ինչպէս շարձարել...

Նա համբուրեց նրա ձեռքը:

Տղան ցնցւեց և յետ քաշեց ձեռքը:

— Ի՞նչ ես անում, ի՞նչ ես անում:

— Սիրում եմ... սիրում եմ... շնջաց նա փարւելով նրա վզին և համբուրեց նրա լայն ալրուող ձախտը:

— Թող ինձ... գնա... Ես ամաչում եմ ինքս ինձանից, ես թէրիք կնոջ պէս պատրաստ եմ ամեն բոլոր լալու:

— Դէ լաց եղիր, լաց եղիր, այդ կը թեթեացնի, զլուխդ թեքիր կը ծքիս և կարող ես լալ, ես կը շոյեմ զլուխդ՝ մինչև քնես... հէքեաթներ կը պատմեմ, մինչև քնես, իմ յիմար, յիմար երեխայ, դէ՛հ քնիր... քնիր...

Եւ նա մեղմ ինչոր օրօր երգեց:

— Ի՞նչ լաւ է... Ա՛խ, ինչ լաւ է... ինչպէս կարօտ էի մի հանգիստ բոլելի...

— Դէ՛հ, տես մանկիկս... ամեն ինչ լաւ կը լինի...

Երկար աչքպէս լուռ նրանք նստած էին, երբ միւս սենեակից լսեց ժամացոյցի զանգի ձայնը:

— Քանի՞ն էր:

— 11-ը:

— Շուտով էլ եք տրաքարշը կը դադարի:

— Ի՞նչ է, դուրս ես անում:

— Գնա, իսկ վաղը կը խօսենք, շատ, շատ... ամբողջ հինգ օր է ես չեմ քնել... Քեզ էլ յոգնեցրի... վաղը կը խօսենք...

— Միմիայն ոչ յիմարութիւններ:

— Ինչ Աստուած կը տայ. խելօք-խելօք էլ կը խօսենք, յիմարութիւններ էլ դուրս կը տանք:

— Դէ, դէ այդպէս ժպտայ, թէ չէ կը մնամ ու կը ձանձրացնեմ, ժպտայ, թէ չէ ամբողջ գիշերը կը նստեմ կողքիդ և տեղիցս չեմ շարժուել:

Տղան ժպտալով բռնեց նրա երկու ձեռքն էլ և մի քանի անգամ ջերմ-ջերմ համբուրեց:

Աղջիկը ծիծաղելով ընկաւ նրա գիրկը և մի քանի վայրկեան լուռ սղմած էր նրա գրկում...

— Դէն, ցտեսութիւն... Բարի գիշեր,— ազատուելով նրա գրկից և վաղելով վերաբերուեալ հագնելու՝ կանչեց աղջիկը:

— Նա գալիս եմ:

— Կարիք չկայ: Աղջիկ փախցնելը Մոսկւայում վաղուց վերացել է: Պառկիր և քնիր. տես լաւ քնիր, որ վաղը այդ ցնդաբանութիւնները դուրս դան գըլխիցդ...

— Դեռ քնելու շատ ժամանակ կայ:

— Ոչինչ, ոչինչ, շատ քնիր, քեզ հարկաւոր է շատ, շատ քնել:

— Ի՞նչու բժշկական կուրսերը չմտար:

— Ոչ, քեզ պէս երեսնաների համար աւելի մանկավարժ է հարկաւոր, քան բժիշկ, ցը...

Ուրբէնը վերցրեց գլխարկը:

— Ասացի որ աւելորդ է:

— Մինչև էլեքտրաքարշ:

— Դէն գնանք,— նա մտաւ նրա թիւը և իջան...

Բաւականին տեղ նրանք ոտքով գնացին, թողնելով որ մի քանի վազոններ անցնեն:

— Դէն, բաւական է, այստեղից վերադարձիր: Վաղը ժամ 12-ին կը գաս ինձ մօտ:

— 12-ին:

— Այո, ի՞նչ կայ...

— Դասախօսութիւնների չես գնալո՞ւ:

— Վաղը ոչ: Դու էլ չես գնայ:

Այդ բոլորին մօտեցաւ էլեքտրաքարշի վազոնը, աղջիկը «բարի գիշեր» ասաց ու բարձրացաւ:

Տղան մի քանի վայրկեան նայեց էլեքտրաքարշի յետևից և դանդաղ քայլերով դիմեց դէպի տուն:

Հազիւ բաժանուեց նրանից, հազիւ 20 քայլ էր արել, որ նորից մտքերը պաշարեցին նրան. նա ցնցեց գլուխը, կարծես ուզում էր դրանով փախցնել այդ անկոչ, ձանձրալի հիւրերին, որոնք ձանձերի պէս սողգոլում էին նրա չորս կողմը:

Նա արագացրեց քայլերը, հասաւ իր տունը, բայց ներս չմտաւ և շարունակեց առաջ գնալ: Նա քայլերը քանի գնում արագացնում էր, կարծես մի տեղ էր շտապում և վախենում էր ուշանալ:

Տարած մտքերով, երևի այդպէս երկար կը գնար, եթէ չբաղխէր մի ծառի և ուշքի չգար: Արդէն հասել էր կլինիկաներին:

— Այս ուր եմ գնում,— լուռ մտածեց նա և յետ դարձաւ:

Ներս մտաւ սենեակը. քունը չէր տանում, ոչ մի բանի ձեռք տալ չէր կարող...

— Ի՞նչ էք ուզում... ի՞նչ էք ուզում... Բարձրաձայն կրկնեց նա, կարծես յետ մղելով աներևացի ուրուականներին, որոնք պար էին բռնել նրա շուրջը:

Ժամերը անցնում էին, բայց նա չէր կարողանում քնել, ամբողջ կեանքը անցաւ նրա առաջից: Նա յիշեց Աստղիկին, երբ առաջին անգամ ամառանոցում հանդիպեց նրան, այն ժամանակ նա գլխաւորօրէն 8-րդ դասարանումն էր, ինքն երկրորդ կուրսի ուսանող էր: Այդ չորս տարին անցաւ աննկատելի, բայց խոր հետքեր թողեց նրա հոգու մէջ:

Մի տարի յետոյ աղջիկն էլ եկաւ բարձրագոյն դպրոց: Նրանք ամեն օր տեսնուում էին, ուրախ էին, երջանիկ և սպասում էին անհամբերութեամբ այս մի տարին էլ անցնէր, որ ամուսնանային:

Որ իրանք հիւանդ սերունդ են, նա միշտ կասկածել է, բայց եղբօր հիւանդութիւնից յետոյ, նա ամբողջապէս տարւեց մտքով, կասկածները փոխւեցին v համոզմունքի: Նա ուսումնասիրում էր իրենց ընտանիքը և որքան խորն էր թափանցում, այնքան աւելի էր սարսափում...

Այժմ նա համոզւած է, որ ինքը դատաւարուած է և արդեօք իրաւունք ունի՞ անբաղդացնել այդ աղջկան, թէկուզ և մեռնի առանց նրան:

— Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ, դա անբարոյշաւանութիւն կը լինի... Ուրեմն ի՛նչ... Մեռնել...

Նրա առաջ պարզ պատկերացաւ Աննան, ինչպէս կենդանի բոլոր...

— Իսկ եթէ ես ոյժ չունեմ ոչնչացնել ինձ, եթէ իմ եսը չնայելով լողիկայի հրամանին, չի ուզում հպատակել ինձ և ինձ մղում է դէպի նրա գիրկը...

Նրա գլխավերեք լուռ կանգնած էր Աննան և անթարթ նայում էր նրան:

— Ինչ ես ուզում ինձանից... հեռացիր... Ես

չեմ ուզում տեսնել քեզ... Կամ ինչ ես լռել... Խօսիր, եթէ կարող ես...

Նա փակեց աչքերը, որ չտեսնի այդ տեսիլները, բայց Աննան մօտեցաւ նրան, թեքեց գլուխը նրա վրայ և նա լսեց նրա մեղմ ձայնը:

— Ճակատագրից չեմ փախչիլ... Քո հօր անէծքը ամեն տեղ քեզ հետ է...

— Բայց ես ինչո՞վ եմ մեղաւոր... Ինչո՞ւ ես պէտք է զոհեմ, ոտնատակ տամ իմ երջանկութիւնը, ինձ ինչ, թէ յետոյ ինչ կը լինի, որ ինձ հետ կը դժբախտանայ և նա, և ուրիշները, ես ուզում եմ ապրել... Ես սարսափում եմ մահից... Ես ուզում եմ երջանիկ լինել:

— Դու երջանիկ չես լինիլ... Երջանկութիւնը քեզ համար չէ... Քո խիղճը քեզ չի թողնիլ երջանիկ լինել... երբ միմիանց յետևից կը թաղես քո անմեղ գաւազներին:

— Իսկ եթէ ես գաւազներ չունենամ... Ես միջոցներ գիտեմ, որոնցով կարող կը լինեմ չթողնել, որ յղանան այդ անէծքի որդիք... Լսիր, ես երջանկութիւն եմ փափագում, իսկ առանց սիրոյ ինչիս է պէտք կեանքը... Ես կը ջախջախեմ այդպիսի կեանք...

— Զախջախիր... ջարդիր... ոչնչացրու...

— Կայ, ո՞ւր ես գնում...

— Մայրիկը մենակ է... զնամ մխիթարեմ այդ թշուառ պառաւին... Նա մենակ է... Ես և նա, այդ սիրոյ զոհերն ենք... Թող մի երբորդն էլ գայ միանայ մեզ... Երբ առանց գիտակցելու է լինում, դրա հետ մի կերպ կարելի է հաշուել, բայց գիտակցելով այդպիսի ոճրագործութիւն, ոչ ոք քեզ չի ներիլ, դու

խնդր քեզ չես ներիլ: Լսիր քո խղճի ձայնին, նա քեզ չի խաբիլ. դու դեռ չես անբարոյականացել, դու մաքուր հոգի ունես, լսիր նրա ձայնին...

Նա հեռացաւ: Տղան սարսափած վեր կացաւ, վազեց դէպի նա, բայց նա արդէն չկար:

Նա յիշում էր նրա իւրաքանչիւր խօսքը, նրա մեղմ ձայնը հնչում է նրա ականջին:

Նա արագ բացեց ձեռքի պայուսակը, նետարդային կերպով խառնեց: Նա ինչ որ մի բան էր փնտռում, բայց այնքան նետարդային կերպով, որ գուցէ մի քանի անգամ ձեռքն է ընկել: Վերջապէս գտաւ, հանեց սև փոքրիկ ատրճանակը և առանց տատանւելու տարաւ դէպի ճակատը: Արդէն պատրաստում էր իջեցնել, երբ յիշեց, որ մի թղթի կտոր պիտի թողնել, ոչ ոքի չտանանգստացնեն, չէ որ դա ընդունւած ձև է:

Նա ցած գրեց ատրճանակը, մի թղթի վրայ նետարդային կերպով մի քանի տող գրեց, նորից վերջրեց ատրճանակը, բայց չբարձրացրեց, մի աներևոյթ ոյժ կարծես բռնեց նրա ձեռքը:

— Օ, օ, օ...— հառաչեց նա՝ երկարատև և ամուր զարկեց ձեռքը ճակատին.— մայրիկ... մայրիկ...

— Սպասիր, դեռ ժամանակ չէ... Սպասիր մինչև կը փակեմ աչքերս... Բաւական է իմ կրածներս, դու ես մնացել, միմիայն դու, զոնէ դու ապրիր, որ փակես աչքերս...

Նա մի կողմ նետեց ձեռքի ատրճանակը, — մի սխմած ճիշ դուրս թռաւ նրա կրծքից և հեծկլտալով ընկաւ գահաւորակի վրայ:

Արդէն երկու շաբաթ էր, որ նա Մոսկւայումն էր, բայց դեռ դասախօսութիւնների չէր կարողացել գնալ: Անքնութիւնից նա տանջւում էր, հալուցիկացիաները նրան հանգիստ չէին տալիս: Մի ժամ չէր կարողանում նոյն նիւթի վրայ կենտրոնանալ:

Նա սիրում էր, և այդ սէրը նրա համար դառել էր մի ծանր բեռ, որից նա ոչ մի կերպ ազատւել չէր կարողանում: Ամեն անգամ նրա մօտից հեռանալիս, նա որոշում էր այլևս երբէք չվերադառնալ, բայց միշտ էլ վերադառնում էր: Նրա բոլոր որոշումները օդն էին ցնդում, երբ նա հետն էր:

Աղջիկը աշխատում էր իր սիրով բժշկել նրան, մոռացնել տալ նրա բոլոր տանջանքները, ցրել պատբանքները և նրան թւում էր, թէ յաջողւում է: Գոնէ այն ժամերը, երբ նա նրա հետ էր, ուրախ էր ու երջանիկ: Երկու զգացմունքներն ուժեղ պայքար էին մղում և ոչ մէկը նրանցից չէր ընկճւում:

Նա եղել էր պրոֆէսորի մօտ, բայց նրա տւած բոլոր խորհուրդներն անհետևանք էին մնում: Ինքն էլ լաւ գիտէր, որ այդ պայմաններում ոչ մի դեղ, ոչ մի միջոց օգնել չեն կարող:

Նրան թւում էր, որ օր-օրի վրայ խելագարւում է, որ երկար չի տևիլ և նա փողոցները կընկնի, մինչև կը բռնեն և կը տանեն հիւանդանոց: Նա սարսափում էր այդ մտքից. հէնց այդ միտքը բաւական էր, որ նրան խելագարութեան հասցնէր:

— Այսօր կամ վաղը, միևնոյն է, մի օր հօ լինելու է, չէ որ դա ճակատագիր է, որից ոչ մի դէպքում խուսափել չի կարելի:

Նա սարսափած վեր ցատկեց տեղից, արագ հա-

գաւ վերարկուն և վագելով իջաւ աստիճաններից։
Երկար տեղ նա արագ վագելով դնաց. ճանապարհին՝
ընկերով հարցերին—*Թէ երբ է եկել, ի՞նչու չի երե-*
ւում և ո՞ւր է գնում այնպէս արագ, նա հազիւ պա-
տասխանեց.

— Ներիր, շտապում եմ,— և առանց «ցտեսու-
թիւն» ասելու անգամ անցաւ։

Որպէսզի նա այլ ևս ծանօթների չհանդիպի,
նստեց առաջին հանդիպած կառքը և ասաց փողոցի
անունը։

Կառքն այնպէս դանդաղ էր ընթանում, որ նա
նստած տեղը նեարդային այնպիսի շարժումներ էր
անում, որ տեսողները խելագար կը կարծէին։

— Այդ ինչպէ՞ս ես գնում... Սատկո՞ւմ եմ ձիերդ,
ինչ է։

Կառապանը ոչինչ չասաց, մտրակեց՝ նիհար, ու-
կորները դուրս ցցւած ձիու կողքերին, որը 15—20
քայլ սովորականից արագ գնաց ու էլի սկսեց առա-
ջւայ նման դանդաղ, հազիւ փոխել իւրաքանչիւր քայ-
լը։ Երբեմն նրան թւում էր, թէ կառքը կանգնած է
և չի շարժւում։ Անտանների երկար թւաց նրան այդ
ճանապարհը։

Վճարեց կառապանին և արագ քայլերով վեր բա-
րձրացաւ, մի քանի անգամ իրար յետևից սղմեց է-
լեքտրական գանգի կոճակը։

Շատ չանցած, դուռը բացեց Աստղիկը, որ երևի
գանգահարելու ձևից իմացել էր, որ նա է։

Նա առանց բարևելու անցաւ նրա սենեակը։

Աղջիկը վախեցած ներս գնաց, բռնեց նրա ձեռ-

քը, որ սառուցի պէս սառն էր, դէմքի մկանները
նեարդային կերպով դողում էին։

— Ի՞նչ է պատահել, — նստեցնելով նրան հարց-
րեց, — ինչո՞ւ ես այդպէս գունատ։

— Փրկիր, փրկիր ինձ, — գոռաց տղան, — ես խե-
լագարւում եմ, ես վախենում եմ մենակ մնալ, ես
անկարող եմ այսպէս շարունակել։

— Բայց ի՞նչ է պատահել, Ռուբէն։

— Ես վախենում եմ։

— Ռուբէն, այդպէս չի կարելի, դու ինքդ քեզ
գիտմամբ հիւանդացնում ես։ Քեզ հանգիստ է պէտք
իսկ դու անվերջ առիթներ ես հնարում՝ նեարդերդ
քայքայելու, — բժշկի պատէրները չես կատարում,
խտապէս, որ այդ կերպ դժւար չէ հիւանդանալ։

— Միայն ոչ այդ, դա սոսկալի է։

Աղջիկը յուսահատւած նայում էր նրան և չգի-
տէր ինչ անել, ինչ ասել։

— Ոչ մի հիւանդութիւն, նոյն իսկ մահը ինձ չի
սարսափեցնում... Թող ամբողջ մարմինս փթի՝ մինչև
սակորներին ծուծը, բայց այս անիծեալ գանգը չկոր-
ցնի իր գիտակցութիւնը, թող մէկ-մէկ դուրս քաշեն
նեարդերս — ես կը զիմանամ բոլոր տանջանքներին,
բայց ոչ այդ, ոչ այդ...

— Դու յիմար ես... Ի՞նչ ես անում, ի՞նչպէս
կարելի է այդքան ազատութիւն տալ նեարդերին։
Ռուբէն, ախր այդպէս չի կարելի, հիւանդ ես — կը
բժշկւես, միմիայն պէտք է քիչ մտածել հիւանդու-
թեան մասին, իսկ դու փոխանակ բժշկւելու, կարծես
գիտմամբ՝ շարունակ մտածում ես, ինչպէս աւելի
լարես նեարդերդ... Երէկ թատրոնում, թատրոնից

յետոյ՝ ամբողջ օրը համարեա միասին էինք և այնպէս լաւ էր, ինչ պատահեց այս գիշերւայ ընթացքում. քեզ ուղղակի մենակ չպիտի թողնել...

— Բո ներկայութեամբ ես բոլորովին ուրիշ մարդ եմ, իսկ առանց քեզ, ես կորած եմ անդարձ...

— Ես էլ քեզ հետ կը լինեմ, միշտ քեզ հետ...

— Այո, ինձ մենակ մի թողնիլ...

Նրկունսն էլ մի բռայէ լռեցին:

— Ես չեմ կարողանում պարապել, քեզ էլ խանգարում եմ, ես շատ եսասէր եմ, ներիւր ինձ:

— Յիմար, յիմար երեխայ:

Նա գրկեց նրան և համբուրեց:

— Աստղիկ, վազն և եթ ամուսնանանք, ինչ ենք սպասում, ինչ կարիք կայ, մի բան, որ անխուսափելի է:

— Միայն այն պատճառով, որ անխուսափելի է:

— Միենոյն է, անկարող եմ ապրել առանց քեզ:

— Լաւ, հէնց վաղը... այո:

— Վաղը դու ինձ մօտ կը լինես, դու կը հալածես այն ուրուականներին և հանգիստ կապրենք, վաղը... ես երջանկութիւնից պատրաստ եմ լալու...

Նա նետարդային ծիծաղով,--որն աւելի լացի էր նման, գրկեց նրան և գլուխը թեքեց դէպի նրա կուրծքը:

— Վաղը նորից կերթաս բժշկի մօտ: Պէտք է աւելի լուրջ մտածել առողջութեանդ մասին. այդքան անփոյթ լինել ներելի չէ մի ինտելիգենտ մարդու:

Ռուբէնը սառը ոտի կանգնեց, ժպիտը սառաւ նրա շրթունքներին, գլխիկոր մօտեցաւ գրասեղանին և նստեց:

Աղջիկը մօտեցաւ նրան, մի ձեռքով գրկեց գլուխ և սղմեց կրծքին:

Ռուբէնը փակեց աչքերը և լուռ մնաց:

— Կուզե՞ս դուրս գնանք:

— Ի՞նչ,--դժգոհ հարցրեց Ռուբէնը, կարծես քնից զարթացրին:

— Դու քնած էիր:

— Այո, ոչ... ինչ ասացիր:

— Կուզես գնանք մի քիչ զբօսնելու:

— Լաւ, գնանք:

Նրանք հագնւեցին և դուրս եկան:

Հրաշալի եղանակ էր, մի քիչ ցուրտ էր, սակայն գուրեկան: Փողոցում, նրանց տրամադրութիւնն էլ աւելի լաւացաւ, մինչև անգամ Ռուբէնը սկսեց կատակներ անել, ծիծաղել... Նա նկարագրեց իրենց եկեղեցու տէրաւերին, որ կը հարցնի.

— Բոռ է, քաչալ է, համաձայն էս, և Աստղիկը համեստութեամբ կիսաձայն կասի, այո, իսկ դու, որդեակ, համաձայն էս:--Այո, կը գոռայ ինքը, 100 անգամ այո:

Գիշերւայ 11-ն էր, որ նա Աստղիկին տուն հասցրեց: Հրաշալի տրամադրութեան մէջ, կասես ամեն բան մոռացել էին, մինչև անգամ Աստղիկը, մոռացել էր, որ նա հիւանդ է... Ժամադիր եղան միւս օրւայ համար և բաժանւեցին:

Հազիւ բաժանւել էր Աստղիկից, երբ իրեն այնպէս վատ զգաց, որ պատրաստ էր նորից վերադառնալ նրա մօտ, ասելու որ անկարող է մենակ մնալ, որ վախենում է մենակութիւնից, ինքը իրանից:

Նա յիշեց իր սենեակը, որտեղ ամեն մի ան-
կիւնում մի ուրուական է ցցւած և եթէ նա ներս
մտնի, ամեն կողմից կը յարձակեն նրա վրայ:

Նա վճռեց տուն չգնալ:

Անցաւ Տւէրսկոյ բուլւարը, հասեց առանձնացած
մի հասարանի վրայ... Ինչու է հասել այդտեղ, եր-
կար կը մնայ, թէ մի ուրիշ տեղ կերթայ,—նա ոչինչ
չգիտէր, ոչինչ չէր տեսնում, ուղեղն այնպէս ան-
շարժ էր, ոչ միտք, ոչ յուզմունք:

Մի քիչ անց, նրան մօտեցաւ մի կոկոտ կին և
հասեց կողքին, և լուռ նայում էր նրան, սպասելով
որ առաջինը նա կը սկսի խօսել, բայց նկատելով, որ
չի էլ մտածում,—ինքը սկսեց.

— Կոլլէգա, ինչո՞ւ էք տխուր:

Տղան ոչինչ չպատասխանեց:

— Ձէք ուզում ինձ հետ խօսել:

Նա նորից լուռ էր:

— Կոպիտ,—ասաց աղջիկը և բարկացած վեր
կացաւ. մի քանի քայլ արեց և նորից յետ եկաւ:

— Ի՞նչ էք ծովահորթի նման լռել... Գնանք հիւ-
րասիրեցէք, այնպէս ծարաւ եմ:

Ռուբէնը ցնցւեց ու յանկարծ ոտի կանգնեց:
Աղջիկը վախեցած մի քայլ յետ գնաց:

— Ի՞նչ պատահեց:

— Գնանք:

— Ծովահորթը վերջապէս խօսեց,—ծիծաղելով
ասաց աղջիկը և մտաւ նրա թիւր:

— Ո՞ւր կուգես:

— Միենոյն է, կուգես մտնենք դիմացի գարե-
ջրատունը:

Նրանք ներս մտան և հստեցին ազատ սեղանի
առաջ... Աղջիկը այնքան մօտ հասեց, որ նրանց
սրունքները սխմած էին միմեանց: Ռուբէնը փոր-
ձեց մի քիչ յետ քաշել, բայց աղջիկն էլ մօտ բերեց
աթոռը:

— Ի՞նչ կուգէք,—արագ մօտենալով հարցրեց
ծառան:

— Ի՞նչ կուգէք,—դարձաւ Ռուբէնն աղջկանը:

— Գարեջուր... Ես քաղցած եմ:

— Պահանջեցէք, ինչ ուզում էք... Առայժմ եր-
կու շիշ գարեջուր:

Աղջիկը պահանջեց մենիւն:

Ծառան հարևան սեղանի վրայից վերցրեց և
տւեց աղջկանը, ինքը գնաց գարեջուր բերելու:

— Դուք ոչինչ չէք ուտելու, կոլլէգա:

— Ոչինչ:

Ծառան բերեց գարեջուրը, ընդունեց աղջկանից
պատւէրը և հեռացաւ:

— Դուք ուտւ չէք,—ժպտալով և գլուխը կոկե-
տով թեամբ մօտեցնելով նրան՝ հարցրեց աղջիկը:

— Ո՛չ:

— Կովկասցի:

— Այո:

-- Ի՞նչ ուրախ եմ, ես շատ եմ սիրում կով-
կասցիներին...

Ռուբէնը բաժակը ձեռքին նայեց նրա դէմքին
և նոր նկատեց, որ հազիւ 18 տարեկան, կապոյտ աչ-
քերով, ոսկեգոյն մազերով մի սիրուն աղջիկ էր...

— Ինչո՞ւ էք այդպէս ինձ նայում:

— Ի՞նչ գեղեցիկ աչքեր ունիք...

— Կոմպլիմենտներ. ախ դուք, ծովահորթ...

Նւ իր փոքրիկ ձեռքով կամաց խփեց տղայի դէմքին:

Ռուբէնը նայեց շուրջը: Գարեջրատունը լիքն էր. այնպիսի աղմուկ էր, որ հարեան սեղանի խօսակցութիւնը դժար էր լսել: Նա ուրախ էր, որ բոլորը զբաղւած են և ոչոք չի էլ մտածում նայել իրանց:

Ծառան բերեց պատւիրածը: Դարձեալ երկու շիշ գարեջուր պահանջեց:

— Քո կենացը, — դարձաւ արդէն «դու»-ով աղջիկը տղային և բաժակը զարկեց նրա բաժակին:

Ռուբէնը ամբողջ օրը համարեաւ ոչինչ չէր կերել, ախորժակ էլ չուներ: Գարեջուրը սկսել էր աղել նրա վրայ: Նա սկսեց կատակներ անել, ծիծաղել:

— Դուրս գանք, — ասաց աղջիկը և ոտի ելաւ:

Ռուբէնը վճարեց և դուրս եկան փողոց:

— Ֆայտօն, — կանչեց աղջիկը:

— Ուր, — հարցրեց Ռուբէնը:

— Ինձ մօտ:

— Ոչ, ես տուն պիտի գնամ:

— Ոչ, ոչ, ոչ, ես քեզ չեմ թողնիլ, դու պէտք է ինձ մօտ գաս:

Նա թևից բռնած նրան կառք նստեցրեց. թէև տղան զիմադրում էր, բայց այնքան թոյլ, որ աղջկան հեշտութեամբ յաջողւեց նրան նստեցնել:

Կառքը շարժւեց...

Կառքի մէջ նա կպաւ նրան և սկսեց համբուրել:

Ռուբէնը յանկարծ սթափւեց, յիշեց Աստղիկին և քիչ էր մնում նրան կառքից ցած գցէր, բայց գարեջուրը նրան բոլորովին թուլացրել էր. իսկոյն էլի

մոռացաւ, նայեց աղջկան և այս անգամ նա նրան աւելի զեղեցիկ թւաց. նա այնպէս թարմ էր, կենսուրախ... Նա զրկեց նրան և սկսեց համբուրել:

Տասը բոպէ յետոյ կառքը կանգնեց մի նեղ փողոցում, մի յարկանի տան առաջ:

Նրանք ներս մտան բակը — մութ էր. անցան բակի միւս ծայրը, մի քանի աստիճաններով բարձրացան: Դուռը փակ էր, աղջիկը հովանոցով մի քանի անգամ բաղխեց, ներսից լսեց Նրահայի խռպոտ ձայնը:

Նկայ:

Մի բոպէ անց, նրանք անցան մութ նախասենեակով և ներս մտան մի փոքրիկ սենեակ, որտեղ ամեն ինչ թափթփւած էր... Փոխած զգեստները ընկած էին յատակի վրայ, մահճակալի տակ:

— Ահա իմ սենեակը:

Յետոյ մօտեցաւ դռանը և երկու շիշ գարեջուր պատւիրեց:

Ռուբէնը նայեց շուրջը, թափթփած զգեստներին: Նրա հայեացքը ընկաւ կեղտոտ անկողնու վրայ, որը շտկւած չէր: Նա նայեց շքեղ հագնւած այդ աղջկան, ապա նրա սենեակին և գարմացաւ այն մեծ կոնտրաստի վրայ:

Կիսամերկ մի կին, քնաթաթախ, ուռած աչքերով բերեց 2 շիշ և 2 բաժակ դրեց սեղանի վրայ և առանց նայելու Ռուբէնին դուրս գնաց:

— Կոլլեգա, դու առաւօտը շնու ես գնալու:

Ռուբէնը չգիտէր ինչ պատասխանել: Միթէ նա այստեղ է գիշերելու:

— Գիտե՞ս ինչու եմ հարցնում. ես շատ եմ սի-

րում քնել: Լաւ կը լինէր գարեջրի փողը հիմա տայիր:

— Ի՞նչքան է:

— Մի րուբլի:

Ռուբէնը բացեց փողամանը և հանեց մի րուբլիանոց:

Աղջիկը սղմած նրան նայում էր փողամանի ներս:

— Իսկ սա ինձ, հա՛,—նա երկու մատով ժպտալով դուրս քաշեց մի երեքանոց թղթադրամ:

Ռուբէնը լուռ փողամանը դրեց գրպանը:

— Քո կենացը,—ասաց աղջիկը՝ մի բաժակ մի ձեռքին, իսկ միւսը տալով տղային:

— Ես չեմ ուզում:

— Խմիր:

Նրանք բաժակները դատարկեցին:

— Երէկ 15 շիշ գարեջուր էի խմել, հարբել էի, ամեն բան կոտորեցի, քիչ էր մնացել հիւրիս գլուխն էլ կոտրէի, մի զզեւի հաստ, կարմիր դէմքով մարդ էր, ժլատ... Ես նրան դուրս արի...

Նա նստեց նրա ծնկան վրայ և ծիծաղելով համբուրեց:

— Ի՞նչ սև բեղեր ունես, մազերդ ինչ խիտ են, տէր Աստուած,—և մատներով սկսեց խառնել զլխի մազերը:

— Ի՞նչպէս է քո անունը:

— Միթէ միևնոյն չէ քեզ համար:

— Իհարկէ... Բայց չէ որ մի կերպ պիտի կանչել քեզ:

— Անւանիր Գրիշա, Միշա, ինչ կուզես:

— Գրիշա,—լաւ Գրիշա...

Նա էլի գրկեց նրան ու համբուրեց:

— Ինչո՞ւ էլի թթւեցիր...

— Ե՞ս...

— Ժամը քանիսն է:

— 2-ը:

— Օյ... օյ... օյ... Քնել, քնել...

Նա արագութեամբ վեր կացաւ, բաժակները լցրեց:

— Դու չե՞ս ծխում:

— Ոչ...

Սեղանի վրայից մի ծխախոտ վերցրեց, կպցրեց և բաժակ վերցրեց:

— Նրա կենացը, որին սիրում ես:

Ռուբէնը գունատ վեր կացաւ տեղից նրան թրւաց թէ երազ է...

— Դու սիրուհի ունիս... հա՛-հա՛-հա՛... Այ թէ կիմանայ: Բայց ոչինչ, նա հեռու է, ոչինչ էլ չի իմանայ: Աչքերդ փակիր, կամ աւելի լաւ է երեսդ շրջիր դէպի պատը, չնայես, ժպտալով ասաց նա և մէկը միւսի յետևից թափեց վրայից զգեստները:— Չնայես,—ճարպիկութեամբ մի շապիկով նա ցատկեց մահճակալի վրայ և վերմակով կիսով չափ ծածկւեց:

— Այժմ կարող ես նայել:

Մի րոպէ նա լուռ նայեց նրա վրայ և ծիծաղեց:

— Ինչո՞ւ չես հանում, ծովահորթ, կատարեալ ծովահորթ... Եկ ինձ մօտ... Դէ՛հ հանիր...

Աղջիկը քնած էր:

Այնպէս խաղաղ անդորր էր նրա քունը. մերկ բազուկը կախ էր ընկել մահճակալից, երկայն ճերմակ վիզը թեքւել էր դէպի տղան, ոսկեգոյն մազերը թափւել էին կրծքին, մի մասն էլ բարձի վրայ:

Ռուբէնը նստած էր սեղանի մօտ և անթարթ նայում էր այդ աղջկանը և չէր ուզում հաւատալ, որ այդ սիրուն, անմեղ դէմքով աղջիկը ծախու ապրանք է, որ այսօր իրեն է պատկանում, վաղը մի ուրիշին:

Նա յանկարծ յիշեց Աստղիկին, որը նոյնպէս քնած է... Զարմացած նայեց շուրջը, կարծես չհասկանալով՝ թէ ուր է, ինչպէս է ընկել այստեղ...

Յանկարծ նա մի այնպիսի ատելութիւն զգաց դէպի այդ աղջիկը, որ այնպէս անդորր քնած է, նրան բարկացրեց, որ նա այդպէս անմեղ դէմք ունի: Նրա մէջ մի անգիմադրելի ցանկութիւն առաջացաւ. վեր կենալ, բռնել նրա երկար ճերմակ վիզը և սխմել, մինչև աչքերը դուրս կը պրծնեն, մինչև լեզուն կախ կընկնի և այն ձիւնի նման դէմքը կը կապտի: Նա մինչև անգամ վեր կացաւ, մի քանի վայրկեան կատաղած աչքերով, մատերը նեարդային կերպով ձգւած՝ նայեց աղջկանը, մի երկու քայլ արաւ դէպի նա, բայց ուշքի գալով նա յետ եկաւ, նստեց նախկին տեղը, բաժակը լցրեց գարեջրով և դատարկեց:

Նա ուզեց վեր կենալ գնալ... Բայց ինչպէս դուրս գնալ այդտեղից: Նա նայեց, դուռը բաց էր. բոլորը քնած էին և ոչ մի ձայն չէր լսուում, հագաւ վերարկուն, գլխարկը վերցրեց և համարեա վազելով

դուրս եկաւ սենեակից: Անցաւ բակի երկայնութեամբ, զարթեցրեց դռնապանին և մի 20 կոպէկանոց դնելով նրա ձեռքին՝ դուրս եկաւ փողոց: Նա համարեա վազում էր. կարծես վախենում էր, որ ահա կը գան կը բռնեն նրան և նորից կը տանեն նրա մօտ:

Փողոցներում համարեա մարդ չկար: Նոր-նոր լուսանում էր:

Նա իրեն ձգեց առաջին հանդիպած կառքը:

— Ո՞ւր կը հրամայէք:

— Պիւլզիխա:

— Մի բուրի:

Զպտասխանեց, չլսեց անգամ կառապանի առածը: Կառապանը լռութիւնը համաձայնութեան նըշան համարելով—մտրակեց ձիուն:

Ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս էր տուն հասել: Վճարեց կառապանին, վեր բարձրացաւ: Արդէն բաւականին լոյս էր:

Նստեց գրասեղանի առաջ, գլուխը յենեց երկու ձեռքերին և երկար անշարժ նստած էր:

Նա ոչինչ չէր մտածում, ոչինչ չէր յիշում, միայն մի բառ մեխի պէս ցցւել էր գլխումը և նա շարունակ այդ բառն էր կրկնում—կոլլէգա, կոլլէգա,—բարձրաձայն կրկնեց նա, ցնցեց գլուխը, վեր կացաւ, արագ մի քանի անգամ անցաւ սենեակի երկարութեամբ, անգիտակցաբար մօտեցաւ պատուհանին, բացեց օդանցքը և աջ ձեռքով յենեց պատուհանի փեխիկին: Կամաց-կամաց նա սթափուում էր այդ թրմութիւնից, մտքերը աւելի որոշ ու լողիկ էին դառ-

նում: Նա յիշեց անցրած գիշերը, պարզ պատկերացաւ նրա առաջ այն շիկահեր աղջիկը, որ կիսամերկ պառկած էր անկողնում՝ առանց քաշւելու, որ սենեակում օտար տղամարդ կար: Նա յանկարծ ցնցւեց ամբողջ մարմնով, սիրտը ճմլւեց կրծքի տակ, նա յիշեց Աստղիկին և այնպիսի մի նողկանք զգաց դէպի իր անձը, որ ակամայ թքեց և ամբողջ դէմքը ծամածոեց՝ կարծես սուր ցաւից:

Յանկարծ բոլորովին անսպասելի, նրա մտքերի թելը կտրւեց և բոլորովին ուրիշ ընթացք ստացաւ: Նա առաջ պատկերացաւ՝ քարէ արձանի նման եղբայրը: Գունատ ձակատին վերք և արիւնը դանդաղ ծորում էր այդ վերքից, — նա ծածկեց աչքերը, որ չտեսնի այդ ուրուականը, բայց նրա ականջին պարզ հնչում էր նրա ձայնը:

— Վերքիս արիւնը դեռ չի դադարել: Ես արիւնաքամ եմ լինում, քո հարւածի վերքերն են: Դու ինչպէս սիրտ արիւ խփել, ծեծել հիւանդին, հոգեկան հիւանդին, որն առանց այն էլ ծեծւած է բնութիւնից, Ասածուց, հրէշից, ճիւղաղից... Արիւնը չի դադարում... Սոսկալի ցաւերը գիշեր ցերեկ չեն թողնում փակեմ աչքերս... Անէծք... անէծք քեզ...

Նա ծնկաչոք ընկաւ յատակի վրայ:

— Ներիր... ներիր, — շնչաց նա ծածկելով ափսոսից այլևոր դէմքը:

— Իսկ դու նրան ինչ պիտի պատասխան տաս, ինչպէս պիտի նայես նրա աչքերին, նրան, որին այս գիշեր այնպէս խայտառակ կերպով դաւաճանեցիր, մրոտեցիր, կեղատեցիր նրա յիշատակը: Ո՛ւր է ա-

մօթդ... պատկառանքը թաղել ես գետնի տակ և լըբաբար պոռնիկների գիրկը նետւել...

— Ա՛... ա՛... ա՛... ճշաց տղան՝ արագ տեղից վեր ցատկելով: Յուսահատւած այս ու այն կողմ ընկաւ: Վերջապէս աչքերը ընկան սեղանի վրայ ընկած ատրճանակին: Ներքին հրճանքով վազեց վերցրեց ատրճանակը: Այդ բոպէին ամբողջ սենեակը կարծես լցւեց յուսահատ աղաղակներով ու ճիչերով: Նա լսեց լացի ձայներ, տեսաւ անկիւնում կանգնած եղբօրը՝ ատամները բաց հրհռալիս: Այդ դժոխային քրքիշների մէջ նա բարձրացրեց ատրճանակը և իրար յետեից երկու հարւած հասցրեց քունքին ու լուռ ընկաւ գետին. ապա նետրդային մի քանի ցնցումներ գործեց ու մնաց անշարժ:

[illegible]

For Payment

ՀՀ Ազգային գրադարան



NL0355298

42030